ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-22-2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» հունվարի 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Թորոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1075. Մշակութային ժառանգության ծրագիր» ծրագրի «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված թանգարանային առարկաների ու հավաքածուների պահպանում, համալրում, հաշվառում, հանրահռչակում, այցելուի սպասարկում և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները և իրականացնել դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.5. ապահովել իր կայուն գործունեությունը, ֆոնդարաններում թանգարանային առարկաների անվտանգ պահպանությունը, ազդանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

Գիտաֆոնդային աշխատանքներ

2.4.6. իրականացնել թանգարանային առարկաների համալրում, հաշվառում, վերականգնում և ամրակայում,

2.4.7. իրականացնել թանգարանի հիմնական ֆոնդի թվայնացման (լուսանկարում, փաստաթղթերի թվայնացում, գիտական վկայագրերի կազմում թղթային և էլեկտրոնային ձևաչափերով), ֆոնդային մատյանների արդիականացման աշխատանքները:

Գիտահետազոտական աշխատանքներ

2.4.8. ապահովել թանգարանային առարկաների և հավաքածուների ուսումնասիրումը, գիտական հոդվածների ու զեկուցումների պատրաստումը, սեմինարների անցկացումը, հոդվածների հրատարակումը,

2.4.9. իրականացնել Վիքիպեդիայի համար ժողովրդական արվեստի ու ոչ նյութական մշակութային ժառանգության թեմաներով գիտահանրամատչելի հոդվածների պատրաստման և տեղադրման աշխատանքներ,

2.4.10. մասնակցել հանրապետության տարբեր գիտական հաստատություններում կազմակերպվող ժողովրդական արվեստին և ոչ նյութական մշակութային ժառանգությանը նվիրված գիտաժողովների, նստաշրջանների, գիտական քննարկումներին,

2.4.11. իրականացնել թանգարանում գտնվող և ՀՀ ազգային արխիվում պահվող «Ժողովրդական ստեղծագործության տան» արխիվային ձեռագիր նյութերի մատենագրության կազմման աշխատանքները,

2.4.12. կազմել «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ի երկլեզու գիրք-ալբոմը և հրատարակության պատրաստել,

2.4.13. ավարտել Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան թանգարանային առարկաների տվյալների մուտքագրման աշխատանքները,

2.4.14. իրականացնել «Ժողովրդական վարպետ» վկայականների տրամադրման և ժողովրդական վարպետների քարտեզագրման աշխատանքները, յուրաքանչյուր կիսամյակ պետական մարմնին ներկայացնել տեղեկանք արդյունքների վերաբերյալ: Իրականացնել ժողովրդական վարպետների քարտեզագրում ՀՀ ամբողջ տարածքով:

2.4.15. 2024 թվականի գիտական խորհրդի նիստում հաստատել թանգարանի 2025 թվականի գիտական ծրագրերը և մինչև ապրիլի 30-ը ներկայացնել պետական մարմնին,

2.4.16. մշակել Դիլիջանի ժողովրդական արվեստի թանգարան-մասնաճյուղի նոր ցուցադրության հայեցակարգն ու նախագիծը, կազմել ժամանակացույց՝ վերանորոգման աշխատանքներից հետո հայեցակարգին համապատասխան գործունեության կազմակերպումն ապահովելու նպատակով և ներկայացնել պետական մարմնի հաստատմանը,

2.4.17. իրականացնել գիտական գործուղումներ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի համայնքներ՝ ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ նյութեր հավաքելու նպատակով: Դրանց հիման վրա կազմել և ներկայացնել «ՀՀ ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի» համալրման համար համապատասխան ձևաչափով հայտեր՝ յուրաքանչյուր կիսամյակ պետական մարմնին ներկայացնելով արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն,

2.4.18. հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և ճանաչելության բարձրացման նպատակով իրականացնել «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» շտեմարանի (www.int-heritage.am) սպասարկումը:

2.4.19. հայկական գորգարվեստի հանրահռչակման նպատակով իրականացնել «Հայկական գորգ վիրտուալ թանգարան» կայքէջի (www.armeniancarpets.am) սպասարկումը:

Գիտացուցադրական աշխատանքներ՝ թանգարանային առարկաների հանրահռչակում

2.4.20. թանգարանների միջազգային օր, «Թանգարանների գիշեր», «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների խորագրերին համապատասխան մշակել նոր ծրագրեր, կազմակերպել Ֆրանկոֆոնիայի շրջանակում միջոցառումներ, ցուցահանդեսներ,

2.4.21. կազմակերպել ժողովրդական վարպետների կողմից ստեղծված, դեկորատիվ-կիրառական արվեստը ներկայացնող աշխատանքների ցուցահանդես-վաճառքներ, անցկացնել փառատոներ,

2.4.22. կազմակերպել Ս. Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջոցառում,

2.4.23. կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության տոներին, հիշատակի օրերին և ժողովրդական տոներին նվիրված միջոցառումներ,

2.4.24. ապահովել թանգարանի տեսանելիությունը սոցիալական հարթակներում և հանրահռչակել թանգարանի գործունեությունը,

2.4.25. իրականացնել աշխատանքներ ԶԼՄ-ների հետ՝ ժողովրդական մշակույթը հանրահռչակելու նպատակով:

2.4.26. ապահովել այցելուների ընդունումը և տարբեր լեզուներով էքսկուրսիոն ծառայության տրամադրումը,

2.4.27. պարբերաբար իրականացնել կայքէջի թարմացման աշխատանքներ և կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառման վերբերյալ տեղեկատվություն տեղադրել կայքում, ծավալել գովազդային գործունեություն,

2.4.28. ապահովել մշտական և ժամանակավոր ցուցադրությունների այցելությունների ընդունումն ու էքսկուրսիոն սպասարկումը,

2.4.29. թանգարանի փայտարվեստի ցուցասրահում կազմակերպել ժամանակավոր ցուցադրություններ և կրթական ծրագրեր:

Գիտակրթական ծրագրեր

2.4.30. թանգարանի «Ինքնության դարբնոց» դպրոցի շրջանակում ժողովրդական մշակույթի ոլորտի հետազոտողների, վարպետների, ինչպես նաև հարակից ոլորտների մասնագետների մասնակցությամբ կազմակերպել դասախոսություններ, հանդիպումներ, քննարկումներ, վարպետաց դասեր,

2.4.31. թանգարանի «Ինքնության դարբնոց» դպրոցի շրջանակում անցկացնել ժողովրդական արվեստի մի շարք ոլորտների (գորգագործություն և կարպետագործություն, ասեղնագործություն և ժանեկագործություն, թաղիքագործություն, փայտարվեստ, խեցեգործություն, տիկնիկագործություն, ազգային երգ ու պար, ստվերների տիկնիկային թատրոն և այլն) դասընթացներ տարիքային և սոցիալական բոլոր խմբերի համար՝ թանգարանում և թանգարանից դուրս, անցկացնել թանգարանային ինտերակտիվ էքսկուրսիաներ,

2.4.32. իրականացնել «Արար. ՀՀ մարզերում ազգային մշակույթի պահպանման, տարածման, զարգացման և հանրահռչակման» ծրագրի աշխատանքները,

2.4.33. համագործակցել ուսումնական տարբեր հաստատությունների՝ պետական և մասնավոր դպրոցների, քոլեջների, համալսարանների հետ,

2.4.34. հետևել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավորությամբ անցկացվող «Մեդիագրագիտության շաբաթ» գլոբալ շարժմանը, իրականացնել դրա շրջանակում միջոցառումներ, որոնք կարող են ուղղված լինել լայն հանրությանը և նպաստել մեդիագրագիտությանը՝ օգտվելով Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի Media.am կայքի «Մեդիագրագիտություն» բաժնի կրթական նյութերից,

2.4.35. կազմակերպել դասախոսություններ ՀՀ ՊՆ զորամասերում և քրեակատարողական հիմնարկներում,

2.4.36. միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում պետական մարմնի պահանջով տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության (ների), ֆինանսավորման չափի և վերջինիս (ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.37. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.38. ապահովել կազմակերպության հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram և այլն) գործարկումը կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.39. իրականացնել անհրաժեշտ գովազդատեղեկատվական միջոցառումներ մշակութային արդյունքը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով: Եռամսյակային հաշվետվությամբ պետական մարմնին ներկայացնել հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram, Youtube և այլն) հետևորդների քանակը, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային նյութերի շահառուների ցուցանիշները (*like, share*),

2.4.40. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.41. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի

հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.42. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.43. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ): Բովանդակային հաշվետվությունը ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.44. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.45. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.46. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.47. ավարտված միջոցառումների փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.48. պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները,

2.4.49. պայմանագրից բխող միջոցառումներն իրականացնել՝ ապահովելով պայմանագրի պարտադիր պահանջները,

2.4.50. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, պետական մարմնի հաստատմանը ներկայացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես, մինչև փաստացի ծախսերի կատարումը, համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2024 թվականի դեկտեմբերի 15-ը,

2.4.51. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում **136360,4 հազար (մեկ հարյուր երեսունվեց միլիոն երեք հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) դրամ՝** (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, պետական մարմնին է ներկայացնում ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 3-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ

պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.7. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.8. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 64
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032399, ՀՎՀՀ՝ 02698732	h/h 900018001322 ՀՎՀՀ 01573636
Գլխավոր քարտուղար՝	հեռ. (010) 569-383
_____ Հ. Հակոբյան	Տնօրենի Ժ/Պ՝ _____ L. Թորոյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N N 1
«29» «01» 2023 թ.
N ՄՇԴ-22-2023 պայմանագրի

2024 թվականին **«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան»** ՊՈԱԿ-ի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

	Ցուցանիշեր	Քանակ
Քանակական	Պահպանվող թանգարանային առարկաներ	12035
	Թանգարանային առարկաների մուտքագրում էլեկտրոնային շտեմարան	5000
	Սպասարկվող թանգարանային այցելուներ, այդ թվում՝	13000
	իգական սեռի	6500
	արական սեռի	6500
	Թանգարանային առարկաների համալրում	80
	Թանգարանային առարկաների վերականգնում	2
	Գիտակրթական ծրագրեր, թիվ՝	6
	Գիտակրթական ծրագրերի մասնակիցներ	1200
	Միջազգային գիտաժողովներ	0
	Հրատարակություններ, այդ թվում՝	1
	գիրք, ալբոմ, կատալոգ	*1*
	հոդված	*0*
	Կազմակերպվող ցուցահանդեսներ, այդ թվում՝	8
	միջազգային ցուցահանդեսներ	*0*
	Եկամուտներ (հազար դրամ), այդ թվում՝	154498,4
	տրամադրվող դրամաշնորհի գումարը (հազար դրամ)	*136360.4*
	հասույթ տոմսերի վաճառքից (հազար դրամ)	*10048,0*
	այլ եկամուտ (հազար դրամ)	*8090,0*
	Ծախսեր (հազար դրամ)	154498,4

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ **Հ. Հակոբյան** Կ.Տ.	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Աբովյան 64 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն h/h 900018001322 ՀՎՀՀ 01573636 հեռ. (010) 569-383 Տնօրենի Ժ/Պ՝ **Լ. Թորոյան** Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«19» «01» 2024 թ. N ՄՇԴ-22-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1075	Միջոցառում 11004	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0.0	13636.0	**27272.1**	38635.4	49998.8	**61362.2**	72725.5	84088.9	**95452.3**	109088.3	122724.4	**136360.4**	**136360.4**
Ընդամենը		0.0	13636.0	27272.1	38635.4	49998.8	61362.2	72725.5	84088.9	95452.3	109088.3	122724.4	136360.4	136360.4

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032399 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր գանձապետ՝
Հ. Հովսեփյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 64
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001322 ՀՎՀՀ 01573636
հեռ. (010) 569-383
Տնօրենի ժ/պ՝ Լ. Թորոյան
Կ.Տ.

Հավելված N 3
«29» «01» 2024 թ.
N ՄՇԴ-22-2023 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքականության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ _____ **Հ. Հակոբյան** Կ.Տ.	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Աբովյան 64 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն հ/հ 900018001322 ՀՎՀՀ 01573636 հեռ. (010) 569-383 Տնօրենի Ժ/Պ՝ _____ **Լ. Թորոյան** Կ.Տ.